արբեցութիւնը ։ Այս այսպէս ծածկաբար գոհ ըլլալով իր հակամիտութիւնը, տիրացաւ ու զօրացաւ ասիկայ իր սրտին մէջ և բուռն կիրք մը դարձաւ․ անանկ որ՝ որովհետև չէր կրնար ամէն անգամ ինքնիրեն ըմպելիք գտնալ իր մոլութեանը հետևելու համար, իր աղախիններէն մէկուն ապաւինեցաւ, որ գաղտուկ օղի կը գնէր իրեն ։

Այս աստիճանի անկարգութեան բանը հասած տեսնելով էրիկը, որ ճշմարտապէս գութ ու գորով ունէր անոր վրայ, առանց աղաղակի ու շփոթութեան՝ զարմանալի ու սովորականէ դուրս կերպ մը բանեցուց զանիկայ բժշկելու համար ։ Օղիով լեցուն տակառիկ մը բերաւ տուն, և այնպիսի խուցի մը մէջ դրաւ զայն, ուր առանց ծառաներէն տեսնուելու կրնար երթըցուիլ․ ետքը իր կնոջ քովը գնաց, և վերոյիշեալ սենեկին բալլիքը ձեռքը տալով՝ ծանր կերպով մը ըսաւ․ “Խաթուն, քու սիրած ըմպելիքէդ առատ պաշար մը բերի, որպէս զի ասկէց վերջը չբռնադատուիս գաղտուկ օղի գնել տալու քու աղախնոյդ․ և երբոր այս առաջին պաշարը լմըննայ, ինծի իմաց տուր ։ Որովհետև կ'ուզեմ որ գոնէ ես միայն գիտցող ըլլամ այն ախտին, որն որ նախատինք կ'ընէ քեզի, և որ ամենաչար օրինակ մը կրնայ ըլլալ քեզի ծառայողներուն„ ․․․ ։

Էրկանը այս խօսքերն, որ խորունկ ցաւով մը զուրցուած էին, շատ մեծ տպաւորութիւն ըրին կնոջը վրայ, և կարևոր դեղն ըրին անոր հիւանդութեանը ։ Անանկ ամօթ մը եկաւ վրան, որ և ոչ աչուըները վեր վերցընելու կը համարձակէր․ բայց ետքը քիչ մը աւելի սիրտ առնելով՝ էրկանը ձեռքը սխմեց ու “Ներումն կը խնդրեմ քեզմէ, հազար անգամ ներումն կը խնդրեմ, աղաղակեց․ ինչուան հիմա քեզի մեծ տհաճութիւն մը պատճառեցի, ինծի համար ամըչցընել տուի զքեզ․ սակայն կը խոստանամ որ ասկէց ետքը ա՛լ ոչ երբէք պիտի հանդիպի ասիկայ․ աս օրուընէ սկսեալ ես կը կենամ այն զզուելի հակամիտութենէն, որ անարգանք է ինծի․ և անկէց հեռու կենալու համար բաւական պիտի ըլլայ ինծի այսօրուան տուած դասդ յիշելը„ ։ Այս իրաւցընէ, այս ամօթոյ զգացման հետ միանալով նաև կրօնից զօրութիւնը, որուն ինչուան այն ատեն անտարբեր կեցած էր, ատենակալին կինը անանկ հաստատ պահեց իր խոստումնքը, որ սկսաւ իբրև ժուժկալութեան օրինակ մատնանիշ ցուցուիլ ամենուն ։

Զի՞նչ է մարդ, բայց անօթ ջախջախ և դիւրաբեկ, նաև խարխուլ՝ որ ոչ եթէ 'ի մրրկէ՝ այլ և 'ի դոյզն ալեաց բախեալ քայքայի և ընդհարեալ փշրի ։ Զի՞նչ է մարդ, բայց մարմին տկար և դիւրեղծանելի, մերկ և անպատսպար 'ի բնէ, այլոց կարօտ օգնականութեան, ամենայն արկածից բախտի նշաւակ, և հանդերձ իւրով ջլապինդ զօրութեամբն՝ որս և ճարակ գազանաց․ գործած թոյլ և լոյծ վեր 'ի վերոյ ևեթ արտափայլեալ երևութիւ, անբաւական 'ի տօկ ցրտոյ և տօթոյ և աշխատութեան, և հանգստեամբն դարձեալ և անգործութեամբ հիւծական ։ Սնունդ իսկ նորա բազմավտանգ, մերթ առաւելութեամբ և մերթ նուազութեամբ կերակրոցն վնասի ։ Պահպանութիւն նորա բազմահոգ և տարժանելի, մուրացածոյ և առանց հաստատութեան զօրութիւն նորա, յանկարծ երկիւղիւ սասանի և յեղակարծ ձայնիւ ընդոստնու, իւր միայնոյ անպիտան և վնասակար 'ի սնունդ ։ ․․․ Ոչ մեծի ինչ զօրութեան պէտք են 'ի կորուստ նորա․ հոտ և ճաշակ և աշխատութիւն և տքնութիւն և կերակուր և ըմպելի և այլն ամենայն առ 'ի կեանս պիտանացուք՝ մահաբերք են նմա ։ Ընդ շարժելն ուրեք՝ իսկ և իսկ իրազգած լինի տկարութեանն իւրում․ ընդ ամենայն երկնիւք կեալ ոչ կարէ, 'ի ջուրցն փոփոխելոյ և յանսովոր օդոց և 'ի դոյզն արկածից և 'ի պատճառաց դիւրավնասելի․ կենդանի ապականեալ, փուտ և տխմար՝ լալեօք եկեալ 'ի կեանս, սակայն ո՜րչափ աղմուկս յուզէ, յորպիսի խորհուրդս մտաբերի մոռացեալ 'ի սպառ զիւրոյ տկարութեանն զպայման ։ Անմահականս երկնէ և յաւերժականս, և մինչ 'ի թոռունս և 'ի թոռնեայս դէտ ակն կայ և անօրէն ։ Եւ այն ինչ զապագայիցն հոգայ զհեռաւորայ՝ գայ հասանէ մահ զգետնել զնա․ զի և անուանեալն այն ծերութիւն զի՞նչ է, բայց սակաւօրեայ ամաց շրջան ։

ՍԵՆԵԿԱ.